



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2019թ. թիվ 488-Ա

«ՎԱՆԱԶՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 417-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «է» ենթակետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի N 918-Ա որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի 8՝ հիվանդանոցային համալիրի հասցեում գտնվող՝ 10,358.87 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքից 2,153.88 քառ. մետր ընդհանուր մակերեսով մանկագինեկոլոգիական մասնաշենքը՝ 117,232,781 դրամ կադաստրային արժեքով և 80,219,080 դրամ հաշվեկշռային արժեքով, և 3.18186 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասից 0.33 հեկտար հողամասը (այսուհետ՝ անշարժ գույք) վճարել ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց:

2. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 5,633,690,000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 80,300,000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով:

Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 5,553,390,000 ՀՀ դրամ:

3. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 417-Ա որոշմամբ հաստատված «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,553,390,000 (հինգ միլիարդ հինգ հարյուր հիսուներեք միլիոն երեք հարյուր իննսուն հազար) դրամ, որը կազմում է 555,339 (հինգ հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր երեսունհինը) հատ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 555,339 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային»:

4. Հանձնարարել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

ՀՀ ԼՈՒՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 
ԱՄՐԱՆՈՒՄ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 30
ք.Վանաձոր